Հրանտ Մաթևոսյան

Այսօր և այստեղ

- Ինձ՝ «Լիտ. գազետայի» աշխատակցիս, հարցազրույցի հրավիրեց Ձեր «Տերը» վիպակի ընթերցումը («Դրուժբա նարոդով», 1987-ի հոկտեմբեր): Սկզբում անսովոր ու ինքնանպատակ էր թվում այդ «արքայական» ՄԵՆՔԸ՝ «Մենք ասացինք», «Մեր ձիու գլուխը մենք պահեցինք» և այլն, ապա դա անհրաժեշտ թվաց մանավանդ այսպիսի մի բացատրականից հետո. «Տասնութ թվի հեղեղ-անձրև հունիսին մեր էս սարերով, գաղթական ամբողջ Հայաստանը ետևը ծփալով-ծփալով՝ մի Անդրանիկ Զորավար է անցել. որ «մենք» ենք ասում՝ ուզում ենք, մատաղ, մեզ Անդրանիկ Զորավար տեսնենք, բայց թե ոչ ետևներիցս եկող ժողովուրդ ունենք, ոչ էլ առաջներս՝ թուրքի թշնամի»: Ժամանակավրեպ չէ՞, կարելի՞ է ասել, որ Ձեր Ռոստոմ Մամիկոնյանը մեր օրերը նույնքան տագնապալի է համարում, որքան այն հեռավոր «հեղեղ-անձրև հունիսը» և ըստ այդմ էլ փնտրում ժողովրդի և առաջնորդի, առաջնորդ խոսքի, առաջնորդ վարքի այն հին միությունը:
- Մեր ժողովրդի կյանքում այդ «երկաթի հեղեղը», այո, եղել է, և մի անգամ չէ՝ որ եղել ու լինում է, և եղեռնի տարիներին մի տեղ չի, որ եղել է: Հայաստանի հանրապետությունը, այսինքն մենք՝ ես ու քեզ ծանոթ բոլոր կամ գրեթե բոլոր հայերը, այդ քարավանների բերածն ենք, Ավստրալիայից Ամերիկա հայոց ողջ սփյուռքը այդ քարավաններով փրկվածն է: Ժողովուրդն իր առաջնորդներին՝ հաճախ ծխական խեղճուկրակ քահանաների, հաճախ իրենից որևէ մեկին՝ առջևն է գցել ու ինքը ետևից հոսել երկրի բոլոր ծագերի վրա դեպի փրկության ափ՝ դեպի Թավրիզի խանություն, դեպի Սիրիական անապատ, դեպի ծով՝ ուր պիտի որ օրինապահ որևէ տերության ռազմանավ լիներ, դեպի Ռուսական կայսրություն, դեպի «ազգովին» մահմեդականացում: Սուրբ գրքում այդպես

պատմվել էր և այդպես էլ մեր ժողովրդի կյանքում էր լինում և է, և այդ խեղճուկրակ առաջնորդները պարտավոր էին իրենցից մովսեսներ կոել, պարտավոր էին իրենց դարձնել առաջնորդի ժողովրդական իդեալը, պարտավոր էին ժողովրդի բողոքն ու զայրույթը, հույսն ու հավատը, ողբն ու անեծքը, գոյության փափագն ու լքվածությունը, բարոյականությունն ու անառակությունը, կենդանության բոլոր-բոլոր թրթիռները իրենց ականջներում ու աչքերում՝ իրենց աստծու լեռը ելնել, ժողովրդի այդ բոլոր ձայներից ու պատկերներից կեցության կանոններ ձուլել և ժողովրդին դարձնել որպես Աստծու պատգամներ: Այդ ժողովրդի մեջ յուրաքանչյուրն ու բոլորը կարող էին գող լինել, կարող էին անարդար լինել՝ ճամփի հացը իր երեխայի և իր եղբոր երեխայի միջև հավասար չբաժանել, կարող էին թաքուն ու բացահայտ շնանալ, թաքուն էլ ծնել ու հողել - նրանք դրա իրավունքը չունեին, նրանք անձնավորումն էին այն լուսավորի ու կայունի, որ բոլոր մեղավորների ու բեկվածների մեջ էլ կա: Այդ ասվածը Անդրանիկի մասին, մի երկու խոսք էլ գուցե ուրիշ էջերում ունենամ, մի քանի բառ էլ իրենց տեղը գտնեն գուցե ապագա իմ էջերում, զուտ պատմական իրողություն է: Ժողովուրդը ետևից ծփալով-ծփալով, ուռչելով ու չնվազելով, տիֆը չնայած շատերին ետ էր պահում, ճանապարհի հայ գյուղերը ոմանց չնայած ծածկ էին տալիս, Թումանյանի Դսեղից հոսել է Դիլիջանի ձորով ու Սևանի սարերով դեպի Նախիջևան ու Թավրիզ, հուսացել է՝ թե Փոքր Ասիան պիտի ճեղքի ու ելնի Միջերկրական ծովափ, ուր դեռևս հոծ հայություն կար: 1918-ի թաց, ծանր գարնանը բոլոր քարանձավներից, բոլոր գյուղերից ու գոմերից բոլոր արահետները որբերին ու որբևայրիներին դեպի Անդրանիկ էին բերում, երբ ելքը նաև ինքը չգիտեր, բայց նաև չէր կարող լքել իր ժողովրդին՝ սպիտակ նժույգի վրա կար իր ժողովրդի առաջ որպես հույսի ու հաղթանակի մարմնավորում, երբ իր հույսը միայն Աստված էր:

Ես սա պատմում եմ ոչ ամենևին միութենական հրապարակում մեր «հարանց վարքով» հպարտանալու համար, հպարտանալիք հայրենի ժառանգները ապագայի առաջ այսքան տագնապներ չէին ունենա, և ոչ էլ «հանուն հայրենիքի» իմ խեղճ գրոհը նախնյաց հիշատակների գերեզմանոցից եմ սկսում, չնայած այս վերջինը միշտ և ամենուր, միջնադարում, այսօր, Եվրոպայում, Ասիայում, քաղաքական պայքարում, անձնական կարիերայի մեջ, անմաքուր, բայց և անվերապահ արդյունքի հասցնում է: Ես այդ փախուստը, այդ քարավանները, այդ առաջնորդներին հիշեցի զուտ այն պատճառով, որ այդ

փախուստը նաև այսօրվա ու այստեղի երևույթ է, վախենամ՝ շատ ավելի վաղվա: Հիշեցնեմ, որ հայրենիքից հեռանում է այն ժողովուրդը, որ պատերազմից անմիջապես հետո Հայաստան եկողների 500.000-անոց մի վիթխարի ցուցակ էր մտել և կարողացավ գալ մի չնչին մասով միայն, այստեղ այդքան տեղ չունեինք և աղքատ էինք՝ միջոց չունեինք: Ընթերցողին հայտնենք նաև, որ կես և ավելի միլիոնանոց այդ զանգվածը Մերձավոր Արևելքի երկրներում հարություն էր առել 1915-22 թթ. թուրքական ասված Արևմտյան Հայաստանից արտագաղթվելուց հետո և այդ քառորդ դարի ընթացքում, չնայած արաբ և պարսիկ ժողովուրդների ամենաեղբայրական վերաբերմունքին, նրանց երկրներն իրեն հայրենիք չէր դարձրել, այսինքն թե Հայաստան գալով հայրենիք էր գալիս: Հայտնենք դարձյալ, և արժե՞ խոսել մի հրապարակում, որ այս յոթանասուն տարիների ընթացքում քո պատմության մասին ոչինչ չի արել ու ոչինչ չի լսել և չգիտես քո ցավի առջև ինչ դիրք կբռնի, որ պատերազմի ողջ ընթացքում այդ զանգվածը հնարավոր ու անհնար բոլոր միջոցներով օգնում էր Սովետների հաղթո՞ղ երկրին, ոչ, նաև պարտվող երկրին, օգնում էր 1941-ի հունիսի 22-ին և օգնում էր 1945-ի մայիսի 9-ին, օգնում էր քսանական հեռավոր թվականներին և սիրում ու օգնում է նաև հիմա՝ 1987-ին:

Մեզանից հեռանում են ահա սրանք ու սրանց ժառանգները: Չեմ ասի, թե հեռավոր ափերում մեզանից լավ են ապրում: Որպեսզի ժամը 9-ին հայ երեխան հայկական դպրոցում լինի, վեց-յոթ տարեկան այդ երեխան ժամը 6-ին պետք է Աթենքի, Ստամբուլի կամ Լոս Անջելեսի մայթին կանգնած այդ դպրոցի ավտոբուսին սպասելիս լինի: Այդպես է, բայց հեռանում են: Կարելի է խնդրել՝ թե հեռանալով մեզ իրենցից զրկում են, մեզ աղքատացնում են, կարելի է ծաղրել, կարելի է խանգարել՝ ինչը որ առայժմ մեր ամենահաջողվող միջոցն է, կարելի է ինքնագիտակցության կոչել, կարելի է աստիճաններով ու պաշտոններով կաշկանդել, միևնույն է, նրանք հեռանում են նաև չհեռանալով: Հայրենիքը որպես այդպիսին նրանց համար չի կայացել, Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը չի դարձել նրանց հայրենիքը, նրանք չեն դարձել Հայաստանի տերերը:

- Ի՞նչ է, Աթենքում, Ստամբուլում կամ Լոս Անջելեսո՞ւմ են նրանք իրենց տեր զգալու, Ամերիկան, Թուրքիան կամ Հունաստա՞նն են իրենց համար հայրենիք դարձնելու:

- Երբեք: Սոցիալ-քաղաքական մի փոքր վերուվարում, բնիկների մի խեթ

հայացք՝ և նրանք միշտ կապած, միշտ պատրաստ իրենց ճամպրուկներին են նետվելու:
- Բայց այսօրվա մեծ ժողովուրդները փոքր ժողովուրդներից են գոյացել, այդ բնիկները ընդամենը երեկվա եկվորներ են, այսօրվա եկվորները շատ թե քիչ խաղաղ երկրում վաղը հենց բնիկներ են լինելու:
- Այդ գուցե այդպես է, բայց գուցե և այդպես չէ: Կարծում եմ այնքան էլ այդպես չէ, բայց եթե նույնիսկ այդպես է՝ դա անստույգ ապագայի անունից շատ ստույգ հարձակում է որոշակի մարդկանց որոշակի մշակույթի վրա: Դա խաղաղ հարձակում կոչիր կամ կոչիր ագրեսիա, միևնույն է: Մարդկության առջև այսօր ծառացած անլուծելի խնդիրները, որ Երկրի վրա դեռ գուցե թանկ նստեն, կուտակվել են նույն մարդկության երեկվա փոքրիկ վրիպումներից, մանրիկ անարդարություններից, աննշան սխալներից: Այս պահի հարցը եթե այսօր ձեռ ի խիղճ լուծենք՝ վաղվա սերնդի առջև միայն պապերի սխալները կլինեն: Ամերիկացի ֆանտաստը այդ մասին մի գողտրիկ պատմվածք ունի. «Ժամանակի մեքենայով» անցյալ մտած ճանապարհորդը անզգուշաբար մի թիթեռ է տրորել այնտեղ անցյալում՝ և այստեղ ներկայում ընտրությունները պրեզիդենտական պուլտի ետևն են անցընել կատաղիների առաջնորդին: Այսօր, այստեղ, իմ ներկայությամբ մի բան տրորվում է, և հայ, սովետահայ գրողի իմ ողջ մարմինը ամոթից անասելիորեն ցավում է - խոսքն այս մասին է: Խայտառակություն է լինել այն տան որդին, որտեղից քո եղբայրները փախչում են, և փախչում են քո այն եղբայրները, որ հարյուրամյակներով կարոտի ու վերադարձի երգեր են ողբացել, և որոնց ճանապարհը հարյուրամյակներ շարունակ ու տարբեր երկրներով միշտ դեպի տուն է բերել: Ուզում եմ «օգնություն» ծղրտալ, բայց որևէ մեկի փրկարար օգնությանը չեմ հավատում և լռում եմ, այլև կասկածում՝ թե ճակատագրով երևի հենց այսպես է ծրագրավորված, որպեսզի խեղդիչ ու ցավեցնող իր կաղապարից «ազգային» իմ մարմինը «ապազգային» անցավ ազատության ձգտեր: Իր համամարդկային-համաշխարհային մասշտաբների մեջ դա գուցե և խելամիտ է, բայց, նորից եմ ասում. ինձ անասելի ցավ է պատճառում, որ ամբողջ Անդրկովկասով մեկ դատարկվում է հենց հայ գյուղը, ցամաքում է հենց հայոց լիճը, նվազում է հենց հայոց դպրոցը՝ հայոց 1500-ամյա դպրոցը, որ խամրում ու լքվում է հենց հայ մշակույթը՝ լեզուն իր բոլոր դրսևորումներով, որ իմ մոր դասի ու իմ աղջկա հասակի կանայք, իրենց ամուսինների ու եղբայրների օրինակով,

օղակ են դառնում ու կարտոֆիլ հավաքելու մեկնում հենց հայ գյուղերից. իրենց տներից հազարավոր վերստերով ու երկար ամիսներով հեռանում են այլ երկրամասեր, որտեղ հող ու ցանքս կա, հավաքող՝ ոչ. ի՜նչ է, դա հեռավոր ԳՖՀ-ո՞ւմ էր լինելու, որպեսզի հրապարակագիր-միջնորդի մատնացույցով սկսեինք հասկանալ, որ օտարության մեջ թուրք լինելը ծանր է. կամ նրանք անպայմա՞ն ծանր ժամանակների ռուս էին լինելու, որ ռուս գրողների միջամտությամբ սկսեինք տեսնել, որ մեր կանանց մենք լիովին ու վերջնականապես ջախջախում ենք և որ դա հարձակում է մարդկային մեր կյանքի հենց հիմքի վրա. ո՛չ, նրանք հեռավոր Գերմանիայում չեն և պատերազմական հեռավոր ժամանակներում չեն. այդ ամբողջ դրաման ծավալվում է հենց իմ ժամանակ, հենց իմ շուրջը և ուղիղ իմ սրտի մոտ:
- Ձեր խոսքը կուզենայիք այդ երևույթներից որի՞ վրա մանրամասնել՝ դպրոցների՞, մշակույթի՞, լճի՞, գյուղերի ամայացմա՞ն... Գուցե այնուամենայնիվ հայ մշակույթի խամրելու մասին խոսեիք, այո՞:
- Մշակույթը՝ մշակույթ, և Մատենադարանն իմ ազգային հպարտությունն է, դպրոցը՝ դպրոց, որ նույնիսկ Դելյանովի արգելքի տակ եղել ու թաքուն գործել է, բայց ինձ համար ամենացավալին մեր հարձակումն է «կանանց հասարակության» վրա: Այդպիսի հարձակում մեր կողմից իհարկե չի եղել, մենք այդքան բարբարոս կամ անհաշվենկատ չենք, բայց ինչ արած, եթե մեր բոլոր նպատակների ու գործողությունների հետադարձ ուժը նրանց վրա է ընկնում, նրանց տունն ու ընտանիքն է խարխլում, նրանց իրենց է աղավաղում, նրանց փոքր «տիրույթների» վրա դրսևորվում որպես ուղիղ հարձակում այդ «տիրույթների» վրա:
Մատենադարանը՝ Մատենադարան, բայց նրանք կենդանի մարդիկ են, իմ միտքը չի կտրվում այդ «կարտոֆիլագործներից»: Օտարության մեջ իրենց գիշեր-ցերեկների վարձը նրանք դրամով են առնում ու խանութները նետվում, որպեսզի տունդարձին վերավաճառեն ու իրենց տունուտեղը կարգի բերեն, կամ կարտոֆիլով՝ որպեսզի ահռելի երկրով մեկ թանկ շուկա գտնեն: Այսինքն մենք նրանց շուկա ենք հանում ու հարաբերել տալիս օրինապահ մարմիններին, հետո այդ աղջիկ-կինը, որ իմ նախապապի հետ գյուղի ու տոհմի հիմք է դարձել՝ ծնել ու սնել է, կթել ու մշակել է, մանել, գործել ու կարկատել է, սողցի ծայրը բռնել է ամուսնու հետ, անտառապետի առջև հաց է դրել՝ իր թխած հացը, իր մերած մածունը, իր քաշած արաղը, ունիվերսալ այդ մարդը ծնելու ու սնելու իր եզակի

ժամանակը աշխատանքային որևէ գաղութում նստած լրացնում է աշխատանքային շատ վատ արտահագուստ կարելով:
- Արդի ռուս գրողներին ահա ինքներդ հիշեցիք: Այդ բոլոր կամ գրեթե բոլոր խնդիրները արծարծվել ու այսօրվա պայմաններում լայնորեն արծարծվում են ռուս և սովետական եթե ոչ ամբողջ գեղարվեստական գրականության, ապա հրապարակագրության մեջ: Նշանակում է՝ դրանք համառուսական-համասովետական խնդիրներ են, ուրեմն ինչո՞ւ եք ասում «հենց այստեղ»:
- Ազգային դժբախտությունների այդ ընդհանրություններն ինձ միայն ուրախացնում են. նշանակում է՝ պատճառները միասին ենք փնտրելու, և եթե ոչ ես ու իմ մոլդավ կամ վրացի ընկերները՝ շիտակ Չեխովի հետնորդներն անպայման կգտնեն: Բոլոր դեպքերում, պատճառների առաջ, դրանք ինչքան էլ անուղղելի լինեն, ես չեմ սարսափի, որովհետև մենակ չեմ լինի: Ինձ վախեցնողը հետևանքների տարբերություններն են, իսկ տարբերությունները մասշտաբային ու էական են: Այստեղ արդեն ես մեն ու մենակ եմ և ոչ ոք, եթե անգամ ուզենա էլ, չի կարող ինձ փոխարինել, իմ փոխարեն այսինքն իրեն դնել:
Հետպատերազմյան ծանր տարիներին ամբողջ երկրով մեկ խնդիր դրվեց, ըստ որի յուրաքանչյուր երկրամաս ու ամեն մի հանրապետություն պետք է հացով իրեն ապահովեր: Տնտեսականից առաջ բարոյականության ոլորտի խնդիր է, ճի՞շտ է՝ հարևանի դուռը մուրացկանության չգնալ: Հայաստանի այս հողը չէր կարող իր զավակներին կերակրել, որովհետև նրանք ոչ բոլորն էին իր ծնունդը, յուրաքանչյուր երկուսից մեկը եկվոր էր՝ Թուրքիայից, Վրաստանից, Ադրբեջանից, աշխարհի տարբեր երկրներից, այսինքն հանրապետության հողը գերբնակեցված էր: Բայց հո չէր կարելի այդ «եկվորներին» և վտարվածներին հիմա էլ հայրենիքից վտարել: Եկել լեռնալանջերին, ամենաանհնար տեղերում, մի աղբյուրի ակունքի կամ բացարձակապես անջուր՝ կառչել գյուղեր էին դարձել, հավաքվել քաղաքներ էին մեծացնում: Չէր կարող, ի զորու չէր ապահովել, բայց մի երկու տարի ապահովեց կամ ապահովելու պես մի բան արեց: Բոլոր հնարավոր ու անհնար տեղերը, մինչև լեռնագագաթները, հերկեց ու ցանեց: Հետևանքները հիմա հանրահայտ են. միջին Ռուսաստանը հիմա փորձում է վերաբնակեցվել, և դա անհույս գործ չէ, որովհետև սևահողի կենդանի շերտիկը կավի տակ հիմա թեկուզև խեղդվում է, բայց չի հեռացել, այդտեղ է՝ միջին Ռուսաստանում՝ «ոչ սևահողային գոտում», իսկ

լեռնահայաստանի հողն այլևս այստեղ չէ, հեղեղները ծովերին են տարել, ցանքատարածությունների, խոտհարքների, արոտների ինքնուն տոկոսն էրոզված է, այս ինքնուն տոկոսի կեսը՝ անհուսորեն անվերականգնելի, տոհմային կեստոննանոց-քսանլիտրանոց կովն այս արոտներում մի սերունդ հետո «այծ» է դառնում:
Եվ այս հողն ենք հիմա մենք, երբ ինքը մեզանից հոգնել է, ինքը զզվել է մեզանից, ինքը հազարամյա հանգստի խոր կարիքի մեջ է, դարձյալ տրորում, դարձյալ շուռումուռ տալիս, դարձյալ պլոկում, քիմիայով դարձյալ ուշքի բերում, որպեսզի կարողանանք չզգալ, որ ինքը մեր ժամանակներում ու մեր ձեռքով ոչնչացվեց:
Ոչ, չեմ ուզում տպավորվել և չեմ ուզում խոսելու իմ հերթին ինձ ձիավոր զգալ: Հայ կիլիկեցիների, ճշգրիտ՝ մուսալեռցիների խոսքն ասում է. «Ձիու վրա էր՝ Աստծուն էր մոռացել, ձիուց իջեցրին՝ ձիուն մոռացավ»: Աստծուն հիմա ես չեմ մոռացել և գիտեմ, որ այդ հողի փրկիչը ես և «ԼԳ»-ն չենք:
Այդ հողն այլևս արտադրական միավոր չէ, տնտեսագիտական այլևս չի դիմանում, այդպիսի հողերը տնտեսություններն իրենց ֆոնդերից նետում են, և որպեսզի մեզ խաբենք՝ թե երբեմնի ծաղկուն այդ լանջերը չենք հանձնել սև անապատին, մտածում ենք՝ թե անհատական ջանքը կփրկեր այդ լանջերը: Չենք փրկելու, որովհետև հողն այլևս անվարձահատույց աշխատանք է պահանջում, իսկ նման զոհողության ոչ ոք չի գնա:
Հար և նման մի իրադրության մեջ էլ Սևանի լիճը լեռներից արձակվեց, հարանման մի վիճակում էլ հանրապետության վզին քիմիայի վզնոցը փաթաթվեց, նույն պայմաններում էլ «հայկական» ատոմայինը դրվեց հանրապետության ուղիղ կենտրոնում:
Ոչ ոքի չեմ մեղադրում, ոչ մեկից չեմ նեղանում, այդ ամենը թվում է հենց այդպես էլ պիտի լիներ: Թվում է, 1918-ի գարնանը, երբ Վեհիբ-բեյը...
- Ինքը ո՞վ է, այդ Վեհիբ-բեյը:
- Մոսկովյան Կրեմլի բարձունքից նայած՝ թուրքական բանակի հերթական աստիճանավոր: Բրեստյան հաշտությունից հետո ռուս-թուրքական ճակատում պայմանագրի չորրորդ կետի կատարածուն, Արարատյան մեր հովտի ցածերից նայած՝ 1918-ի հայության սարսափը: Դուք ինձ ներեցեք, որ դարձյալ եղեռնի ժամանակներն եմ ընկնում. աշխարհում եթե մի մարդ կա, որ չի ուզում այդ ժամանակներն ընկնել, չի ուզում իր ժողովրդի կործանման պատկերի առջև կանգնել՝ հայ գրողն է. բայց ամենամանկական, ամենաալտրուիստական,

ամենաուտոպիական երազանքների մեջ անգամ անհնար է այդ ժամանակները շրջանցել: Ահա այդ գարնանը, երբ փոքրասիական արևելքի հայության մնացորդը այս Արարատյան հովիտ էր քշում Վեհիբ-բեյը, Հայոց-պար լեռների բարձունքից թուրք զինվորականի հեռահար հայացքով երևի թե տեսնում էր այդ մնացորդի այս ապագան և մտածում, որ ոչինչ այլևս պետք չէ ձեռնարկել, մնացյալն այլևս ինքնիրեն կլինի, ժողովուրդն ու նրա տարածությունը իջեցված են այն մինիմումին, որը «մարդկության առաջընթացի համար վնասակար է» (այդպիսի միտք իրենց գաղափարախոսության ու քաղաքականության մեջ կար, կար այն ժամանակ արդեն մի հիսուն տարի):
Մնացյալն ահա ինքնիրեն է լինում: Առանց ատոմակայանի հնարավոր չէր, ատոմակայանով անհնար է: «Իսկ եթե վթարվի՞», «Իսկ եթե չվթարվի՞»: Եթե չվթարվի՝ հանրապետությունից այսքան ու այսքան մարդ աշխատանքային հաստոց կունենա, այսքան ընտանիք կաշխատի և կապրի:
- Իսկապես, հնարավո՞ր չէր ատոմակայանը չունենալ:
- Հնարավոր էր, եթե հանրապետության կառավարությունը իր ժամանակին միութենական կառավարությանը կարողանար ասել. «Աղքատությունը գերադասում ենք վթարից, աղքատությունը կարելի է կառավարել, վթարը՝ ոչ»: Բայց պատկերացնո՞ւմ եք ինչ պատասխան կստանար հանրապետական կառավարությունը. «Ինչ է, մյուս ռեգիոնները հարուստ և դուք աղքա՞տ եք ապրելու»: Մի խոսքով՝ ատոմակայանը կա: Եթե վթարվեց՝ հանրապետության ժողովուրդը մի երեսուն տարով կամ մի հինգ տարով, եթե հասցրեց իհարկե, գաղթելու է, և վերջ այլևս այս հանրապետությանը, վերջ այս ժողովրդին: Բայց հո չի կարելի բեռ դառնալ մեր այն մեծաքանակ ժողովուրդների վզին, որոնք նույնանման վթարի դեպքում կվերանային ոչ ամբողջովին: Չի կարելի, իսկապես անբարոյականություն է: Ուրեմն ի՞նչ: Ուրեմն այն, որ ամեն մի ժողովուրդ իր լուծն ինքը պիտի քաշի: «Ատոմակայանը չպետք է վթարվի» - իսկապես բարեկամի ցանկություն է: Վթարին մենք էլ չենք հավատում, վթարին մենք ավելի քան չենք հավատում, ինչպես ոչ ոք իր կործանումը եթե անգամ տեսնում է, չի հավատում: Բայց այդ բարեկամը (ես չգիտեմ նա գերատեսչություն է, թե անձնավորություն), որ ասում է՝ «չպետք է վթարվի» և գիտի, որ դա լինում է, որ ատոմակայանները վթարվում են, որ դա պատահում է, նա... իր անունը նա թող ինքը գտնի, իր ստույգ էությունը միայն իրեն է հայտնի:
Եթե անգամ իր աղջկան կամ որդուն նա ուղարկի մեր («մեր») ատոմակայանում

աշխատելու՝ դարձյալ անազնիվ է, որովհետև այդ կանի (չի անի, մի կասկածեք) ոչ թե ատոմակայանի անխափանության մասին իր տարակուսանքը փարատելու, այլ միայն լռեցնելու համար տեղացիներիս տրտունջը, գանգատի միակ ձևը մի ժողովրդի, որը չի կարող (անբարոյականություն է) փաստարկ դարձնել իր... եզակիությունը:
Ահա ասացի և վատ զգացի: Չի ասվում, չի գրվում, բողոք-նամակների մեջ հստակ ձևակերպում չի առնում - անբարոյականություն է թվում: Բայց տեսեք. այդ չգիտեմ ով (գերատեսչությո՞ւնը, թե՞ մարդը՝ որ գերատեսչական ու համապետական շահն իրեն պարիսպ է արել) մատիտը ձեռքն է առել ու հաշվել. հնարավոր վթարը վտանգի տակ է պահում սովետական քաղաքացիների 0,7 տոկոսին, 0,7 տոկոս այդ երկու միլիոն մարդը պետք է իր ճամպրուկները կապած պահի, և չի հաշվել, հաշվի չի առել, որ իր այդ 0,7 տոկոսը իր հայրենիքում ապրող հայության ուղիղ 70 տոկոսն է, որ նրանց գաղթը մեկընդմիշտ խաչ է դնում մի ժողովրդի վրա:
Սրա իսկական անունը միայն անհոգություն է ազգային մեր ճակատագրի առաջ, և մեզ համար ավելորդ սրտմաշուկ կլիներ այստեղ չար դիտավորություն փնտրել: Ինչպես նաև պետք չէ գործակցություն տեսնել այս գերատեսչության և այն գերատեսչության միջև, որը կոչված է ժողովուրդների ներքին տեղաշարժը (ինչը որ մեզ համար իսկական պատուհաս է) վերահսկել-կարգավորել, որը հայրենի վերջին եզերքին այս ժողովրդի կապվածությունը հրապարակայնորեն անշարժունակ պահպանողականություն է որակում և որը պիտի որ արդեն գոհունակության զգացումով գլխով անի այն գերատեսչություններին, որոնց գիտակից ու անգիտակից ջանքերով իրենց դարավոր տեղերից ժողովուրդներ են պոկվում: Անհոգություն է սրա իսկական անունը կամ նույնիսկ մտահոգություն, բայց ինչ անես, երբ չարից էլ չար դիտավորությամբ անգամ անհնար կլիներ հարվածել այսպես ժողովրդի վստահությանը առ իր հայրենիքում իր ապագան, և ինչ անես, երբ հայրենի հաստատությունների այս գործն ու փորձը... արձանագրվել է ոչ այսօր ու ոչ այստեղ - 1869-ին Ֆուատ փաշայի կտակում. «Ներկա տերությունների սահմանադրություններում ամենակայուն դրույթը մեծ ձուլումներն են»:
Թվում է՝ կարելի էր հին հաշիվները մեջտեղ չբերել, թվում է՝ կարելի էր հների ոսկորները հանգիստ թողնել: Կարելի էր, եթե իրենք մեզ հանգիստ թողնեին, եթե իրենց տեղերն ու ձևերը ու ժամանակները չփոխեին՝ անփոփոխ թողնելով իրենց

հավիտենական մտահոգության նյութը՝ մեզ: Նստել է ահա քաղաքական նախկին գործիչը և իր սուլթանին նամակ է գրում. «Սակայն որևէ Սերբիա, որևէ Հայկական թագավորություն... ուրիշ բան չեն, քան անխուսափելի ավարներ նորանոր աշխարհակալների, վնասակար տարրեր մարդկային ցեղի առաջադիմության և աշխարհի խաղաղությունը վտանգողներ»: Սա ընդամենը նամակ է, հայտնի էլ չէ՝ սուլթանը կարդալու է թե ոչ, ինքը գործիչը առջևը երկու ամսվա կյանք ունի, քաղաքական ասպարեզից հեռացել է, ուրեմն չի կարող բիսմարկյան սաղավարտ դնել և ձեռքը սվին առնել: Բայց սա նույն իմպերիալիստն է, որ հանուր մարդկության առաջընթացի անունից ուզում է որևէ լավ բան անել և երկու վատ բան է անում - փչացնում է նախ ինձ՝ սերբիս կամ հայիս, երկրորդ՝ իր ժողովրդին, և հայտնի չէ՝ շատ ավելի որիս է փչացնում: Սա նույն իմպերիալիստն է, որ հավերժորեն ուզում է որևէ մեծ բան անել՝ ծովեր բացել, գետեր շրջել, ժողովուրդներ գաղթեցնել, և միայն չարիք է սփռում: Սա բնության ու պատմության մեծ սրբագրիչն է, որ շտկում է բնության ու պատմության մանրիկ վրիպումները՝ մանրիկ հավատներն ու մանրիկ լեզուները, և եթե հավատդ ու լեզուդ արդեն իրենը դարձրեց՝ չի սիրելու արդեն գույնդ, և եթե կարողացար գույնդ փոխել՝ ատելու է արդեն ծագումդ:

Իսկ կկարողանա՞ր գրողների համասովետական-համաշխարհային եղբայրակցությունը նույնքան կուռ, նույնքան միասնական մի պատվար դառնալ գիտության և հասարակագիտության սնապարծների այս միասնական թափորի առջև, գրողների այդպիսի միաբանություն առհասարակ կառաջանա՞, թե՞ բոլորի ու յուրաքանչյուրի ազգային էգոիզմը ոչ մեկին թույլ չի տա միջազգայնության վաղուց թափուր հրապարակ ելնել ու ճչալ. «Աշխարհի վերջը չի, այդ ի՞նչ եք անում, կողք-կողքի դեռ պիտի ապրենք ու աշխատենք»:

- Դժվար է, բայց այդուհանդերձ դառնանք գրականության հարցերին: Ինչի՞ վրա եք աշխատում:

- Վեպի ավարտից հետո, վեպը բռնությամբ փակելուց հետո... Ես դժվարանում եմ դա վեպ կոչել, ժանրի հստակ կանոնը դա չի բավարարում, վեպ գրելու իրավունքը մենք Բիտով ճշգրիտ գրականագետի հետ վերապահել ենք մեր սերնդից թերևս միայն Ռասպուտինին... Դրամա կգրեի՝ խոհ հայրենիքի մասին, ինձ նման անկազմակերպ, քմայքոտ, քիչ ու գեղեցիկով չբավարարվող և շատին ու մեծին չհասնող մարդու համար՝ դարձյալ անհնազանդ ժանրի գործ: Գյուղացի, դարձյալ գյուղացի և միշտ գյուղացի, քանի որ ինձ համար նա հողն ու

հայրենիքն ինքն է, կինը իր ապահով ու խաղաղ տանը հանկարծ, ռադիոյի կամ հեռուստացույցի որևէ կողմնակի նշանի՞ց՝ չգիտեմ, անհանգստանում է, հանկարծ տագնապում է, կողոպտվելու, թանկ մեկին կորցնելու զգացում է ունենում: Հեռավոր Երևան քաղաքում հայրենադարձների մի ընտանիք բեռները կապել, ետ արտասահման է գնում, բեռների մեջ աննշան (կամ հենց թանկ) մի իր կա՝ որ գյուղացի այդ կնոջն է եղել կամ նրա մորը, տատինը, հորաքրոջը, իր (Ավետարա՞ն, արծաթի գոտի՞, չգիտեմ)՝ որ հայ ժողովրդի ոդիսականով թափառել է հայոց և ոչ հայոց բոլոր աշխարհներում ու ժամանակներում և հիմա էլ երկրից է հեռանում: Ահա այդ կնոջ և այդ ընտանիքի հանդիպումն ու բաժանումն եմ ուզում պատկերել: Այդ ընտանիքի վրա, որ անպայման կունենա փախչելու, հեռանալու, այս հայրենիքից թոթափվելու իր գաղափարախոսը, ես չեմ հարձակվի, ոչ: Նրանք բոլորն իմն են. այն աղջնակը՝ որ Վահան Տերյանից բերանացի բանաստեղծություն է տանում իր հետ, տատը՝ որ գաղթի ճամփաներին է սկսել իր կյանքը և ճամփաներին էլ պիտի ավարտի, բոլորը՝ ովքեր տրանսատլանտյան երթուղում են և Թուրքիայում, ովքեր ֆրանսախոս են և ռուսախոս, Իրաքի ռազմաճակատում են և Իրանի ռազմաճակատում, բոլորը իմն են: Հայոց մեր աստղը պայթել ու բոլոր կողմերի վրա ցրիվ է գալիս, և այդ հեռացող կրակե բեկորները քանի դեռ տեսնվում են՝ իմն են: Նրանք իմ ուժն ու կյանքն են հեռացնում: Այդպես, եթե հնարավոր է, խաչված մարմինը կնայեր վերացող հոգու ետևից: Նրանք ետ կնայե՞ն, նրանց հայրենիքը կդառնա՞, Թումանյանի արտահայտությամբ՝ «Էն երկիրը, ուր ձգտում է մեր հոգին»... Դա ոչ մի նշանակություն չունի մի ոմն սոլդաֆոնի համար, որ ուզում է իրեն մաքրակրոն՝ օրթոդոքս խաչակիր երևակայել, որովհետև բոի ու տգետ մարդու իր կերպարանքն այդպես գաղափարի մարտիկի ինչ-որ լուսապսակ այնուամենայնիվ առնում է, նրա համար դա ավելորդ տվայտանք է՝ որ բոլորովին հարկավոր չէ իր գերատեսչության բուրգի շինությանը: Բայց պատասխան նրանից ես չեմ էլ սպասում, իր մեռյալ բուրգը նա թող հաջողությամբ փակի ու փարավոնի իր նինջը հանձնի անմարդ անապատներին: Իմ պատասխանը ես ռուս մտավորականությունից ու ռուս կենդանի գրականությունից եմ ակնկալում. իր լեզվի, մշակույթի, ընտանիքի, մարդ-միավորի, մի խոսքով՝ կենդանի հայրենիքի ապագան նա կգուրգուրի՞, այսօրվա վրա կտագնապի՞, կարժանացնի՞, կկարողանա՞ արժանացնել համայն աշխարհի սիրույն ու պատկառանքին - մեր հայրենիքների վերաբերյալ նույնին կձգտենք նաև մենք:

Մենք դժվար, ծանր խնդրի առջև ենք կանգնած, լինել-չլինելու հարց է, իսկ մարդը, մարդկությունն առհասարակ էգոիստ ու կասկածամիտ էություն է, քո ողբերգության առջև առաջին հերթին մտածում է՝ այդ ողբերգությունից ինքն ինչ վնաս է անում կամ, մեղա, քո հրդեհված տնից իրեն ինչ է մնալու: Մենք կկարողանա՞նք ահա այդ մարդու ու մարդկության գիտակցությանը հասցնել, որ Հայկական հանրապետության քայքայված հողը Երկրի մեկ և նույն օրգանիզմի խոցոտված մաշկն է, որ այդ Երկիրը չի կարող առողջ կոչվել, քանի դեռ մեր խոցը իր վրա է:
Ճշմարիտ պատասխան գտնելը դժվար է, և նրանք, ովքեր կթեթևացնեն հարցը, վախենամ իրենց մտքում այնուամենայնիվ ունեն երկրորդ հայրենիք, նրանց նման, ովքեր «հայկական» ատոմակայանի հարևանությամբ հանգիստ աշխատում են, բայց անձեռնմխելի վառելիքի մի բալոն այնուամենայնիվ պահում են... Իսկ ինձ համար՝ սա միակ հողն է, որտեղ կարող եմ ապրել, միակ լեզուն է, որի մեջ կարող եմ աշխատել, և նրանցից դուրս՝ իմ մահն է:
- Երկրի ու մարդկանց ապագայի Ձեր տագնապով անհնար է իհարկե չհամակվել, բայց հիմա Ձեզ հարցնում եմ ոչ որպես սուր խղճի մի մարդու, այլ որպես մասնագետ գրողի. երբեմն Ձեզ չի՞ պատում այդ հուզող խնդիրների, Ձեր կյանքի բովանդակություն դարձած այդ ծանր պրոբլեմների լուծման, ավելի ճիշտ՝ անլուծելիության առջև Ձեր բացարձակ անզորության գիտակցությունը, Ձեզ հաճախ չի՞ թվում, թե ինքներդ Ձեզ և մարդկանց շատ ավելի հարկավոր կլինեիք մի այլ գործով, ասենք՝ հողագործությամբ, անասնապահությամբ, մեղվաբուծությամբ:
- Այսինքն թե իզո՞ւր չենք գրում, այո՞: Այսինքն թե արդեն երկու հազար տարի է գրականության մեծագույն կոթողը անցորդներիս հորդորում է չսպանել, չշնանալ, չգողանալ, բայց և՛ սպանում, և՛ շնանում, և՛ փառավորապես գողանում ենք, այո՞: Թումանյանի գոյությամբ եղեռն եղավ, Տոլստոյի ներկայությամբ հենց իր նահանգում՝ ժողովրդական խաղաղ ցույցի սևհարյուրյակային ջարդ: Մեծ գրականության Գերմանիայում ֆաշիզմ բարձրացավ, իսկ Պինոչետը բազմել է հակադիկտատորական գրեթե սերիալ վեպերի մեջ, այո՞: Ինչու ենք գրում, երբ տերը դարձյալ բռի ուժն է, այո՞:
Այդ բոլորը՝ այդ հազարավոր պատերազմները, միլիոնավոր սպանությունները, միլիարդավոր գողությունները, ամենուրյա ու ամենօրյա շնությունը՝ այդպես եղել է. պատմությունն այդպես է հիշում, որովհետև այդպես է եղել: Իսկ թե քանի

մարդու մեջ է բռնակալ սպանում այդ հակադիկտատորական վեպը, քանի մարդու բերան է թուք ու անեծքով լցնում ընդդեմ դիկտատուրայի, բիբլիական «մի՛ սպանաները» քանի կոդեքս է մտել ու քանիսին փրկել սպանելու ու սպանվելու մեղքից, քանի մեղսական սեր է խեղդել «մի՛ շնանարը», ռազմագերու վրա քանի տոննա ոսկի է ծախսել կարեկցանքը առ գերին - պատմությունը դա չի հիշում և կարիք էլ չկա, որ հիշի, անցածն են հիշում. այսօրվա ամբողջ աշխարհը՝ մարդկանց կյանքը և նույնիսկ ցամաքի ու ծովերի կյանքը՝ աշխարհի ամբողջ գրականության առարկայացած պատկերն է, այդ պատկերի արատներն ու անբասիրությունը ճշգրտորեն մատնացույց են անում աշխարհի գրականության արատներն ու անբասիր կողմերը:
Ասում եք՝ գոնե կուլտուրայի-մշակույթի՞ ասեմ: Առաջին հերթին նաև ամբողջ կուլտուրան ինքն է գրականության արտահայտություն: Չեմ ուզում ձեռքս հեղինակությունների մեկնել, չեմ ուզում հիշեցնել՝ ի սկզբանե էր Բանն: «Երեխաները Չինաստանում չեն մուրում, մեր երեխաները մուրում են, նշանակում է մեր մշակույթի մեջ սխալ մի բան կա». հնդիկ մի մտավորականի բանավոր այս միտքը երբ ինձ հասավ՝ տեսա, որ ինձ տանջող հարցի պատասխանը նա է գտել: Տարածենք նրա միտքը բոլոր երկրների վրա, և նրանց գրականություններում այդ «սխալ մի բանը» երևալու է: Ամեն անգամ նոր սերունդները կյանքում այդ սխալը տեսնում և նետվում են գրականության մեջ շտկելու այդ արատը:
- Այդ, իհարկե, նաև «վաթսունականների» ձեր սերնդին է վերաբերում:
- Վաթսունականների այդ սերունդը, իր գործի ծավալը չնայած փոքր է (ամբողջ Միության միասնական այդ ժողովածուն կարելի է մի ամսից էլ պակաս ժամանակում յուրացնել, ներառյալ կինոն, թատրոնը, նկարչությունը, երգը), կյանքի առջև սկզբունքային մի ծառայություն այնուամենայնիվ ունեցավ. փոխեց գրականության վերաբերմունքը դեպի մարդը, երկրի գաղափարախոսությունը լուսաբանողի երեկվա դերի փոխարեն փորձեց իր համար նվաճել բուն կյանքը հետազոտողի նոր դիրքեր, և դա՝ պոռթկումով, հեղափոխաբար, կտրականապես ետ քաշվելով գրականության երեկվա վերաբերմունքից: Դա ծանր խնդիր էր. թաթար-մոնղոլական արշավանքների դիմագրավումից մինչև գերմանական զավթիչների ջախջախումը սրբագործում էին երեկվա այդ վերաբերմունքը առ մարդու կոչումը, և «Իգորի ասքից» մինչև «Կոմկուսի մանիֆեստը» և մինչև ցախավելի մասին ժողովրդական խոսքը հիմն էին ընդհանուր ջանքերով այդ հին

և ապագա հաղթանակների:
Բայց նույնքան և ավելի ակնառու էր նաև այն, որ համայնական ասված այդ արնաքամ ու ուժահատ դարավոր տառապյալը ուզում էր այսօր ու այստեղ իր անձնական կյանքն ապրել, իր պսակակիր գլուխը դնելու տեղ էր ուզում՝ ծածկ, կին (ամուսին), երեխա, վաստակ, կարողությունների ծավալում իր ուզած ձևով, այն չնչինը՝ որ մարդկային գոյի կրակը մեր կարճ կյանքում պահպանում է, և առանց որի մենք, զինվորական կորսետի մեջ մեզ ինչքան էլ հավաքենք, հում կավի պես փուլ ենք գալիս: Վաթսունականների մեր սերունդը կանգնեց ու կանգնած է ահա այս մարդու դիրքերում:
«Դեպքի վայրից» չի հեռանում, իրեն չի հանձնում հեքիաթի-առակի աշխարհին և դեպքերի բուն տեղերից սիրով ու ցավով, կրքով ու հուսահատությամբ ահազանգում է՝ ցավում է, խորթանում է, մեռնում է, չի հավատում, լքում է, հարբում է, գազազում է, աղավաղվում է, կործանում է, կործանվում է: Այսքան կամ դարձյալ շատ ու շատ բաներ՝ որ կարելի է մի բառով հոգու ճիչ կոչել կամ ողբ առ ժողովուրդը: Թվում է՝ լիարժեք գրականություն կոչվելու համար քիչ չէ, բայց քիչ չէ՞ արդյոք: Թվում է՝ երկրի անկողմնակալ պատկերն արտացոլել է, և այդքանը բավական է: Եթե այդքանը բավական է, բավարարվենք ուրեմն երկրի ներկա վիճակով, բայց երկրի ներկա վիճակը մխիթարական չէ, ուրեմն մխիթարական չէ առաջին հերթին գրականության վիճակը:
Ինձ թվում է՝ վճռական մի կետում, որի տեղը միայն ինքը գիտի, վաթսունականների մեր սերունդը շփոթվեց ու ընկրկեց. ասաց՝ գողանում է, ինքը իրեն կործանում է, չի բացվում, աղավաղվում է, փչանում է, բայց չասաց՝ գողանում է, որովհետև իրենը չի համարում ու իրենը չի. ինքն իրեն կործանում է, որովհետև իրեն իր թշնամին է համարում. չի բացվում, որովհետև տալուց ու չառնելուց հոգնել է. փչանում ու փչացնում է, որովհետև տերն ինքը չի. անճանաչելիորեն աղավաղվում է, որովհետև մարդու իր բնական տարերքով չի ապրում, այլ հանձնվել է իրեն խորթ ինչ-որ ռեժիմի:
Այդ առնվազն 250 միլիոն մարդու ցանկությունների, երևակայության, նախաձեռնության, ինքնատիպության, ինքնագլխության, բոլոր ու բոլոր հատկանիշների դրսևորման ենթադրական պատկերի առաջ մեր գրականությունը շփոթվեց ու նահանջեց: Եվ այդ շփոթմունքի, այդ անվճռականության, այդ լռության մեջ լավ քողարկված անազնվության, շահախնդրության տարր էլ կար. լուռ ենթադրվում էր, թե յուրաքանչյուրի ու

բոլորի բարոյական նկարագրից այդ կորուստը, յուրաքանչյուրի ու բոլորի այդ դիմազրկությունը գուցե թե այնուամենայնիվ փոխհատուցվում է «սովետական ազգի» միությամբ ու զորությամբ, որն անհնար կլիներ «զոդել» ինդիվիդուումի հասարակարգում, փոխհատուցվում է մեկ և ընդմիշտ, կորցնողն այսինքն մեկ կամ երկու սերունդ է լինում, գտնողը՝ ապագա սերունդների հավերժական երթը: Դարձյա՛լ նույն կրոնը, դարձյա՛լ հանուն ապագա սերունդների ժխտումը այսօրվա ու այստեղի սերունդների:
Մեզանից շատերը, շատ-շատերը մինչև հիմա էլ ու հավիտյան այն կարծիքին են լինելու, թե քսանհինգ տարի եթե անգամ առաջընթաց չենք արել - 250 միլիոն մարդու ամբողջ քառորդ դար կառավարել ենք, հանրության մեջ ենք պահել, այլապես նրանք չէին կառավարվելու, այլապես ցրիվ էին գալու. «Հաջի Մուրադի» իմպերատորին հիշո՞ւմ եք. «Դա, չտո բը բըլա բեզ մենյա Ռոսսիյա: Դա, չտո բը բըլա բեզ մենյա նե Ռոսսիյա օդնա, ա Եվրոպա». «Իսկ ինչ կլիներ այդ 250 միլիոնը առանց մեզ», «Կկործանվեին առանց հանրության», «Համայնքից դուրս՝ կկորչեին», «Նրանք ինչ կլինեին առանց մեզ»: Այս մենք ենք ասում իմպերատորի հանգով, չնայած բոլորովին էլ իմպերատոր չենք:
Առանց մեզ դե այն կանեին, որ առանց մեզ կլինեին, ուրիշ ինչ էին անելու: Մեր ձեռքը կկտրեի՛ն, մեզ թո՛ւյլ չէին տա իրենց ունեցվածքն ու կյանքերը տասնյակ ու տասնյակ միլիոններով այդպես արքայաբար շռայլելու, ինչպես որ միշտ ու հիմա ենք շռայլում: Իրենց 250 միլիոն կամքով ու կարողությամբ կխուզարկեին տնտեսության, գիտության, հասարակագիտության բոլոր ծակուծուկերը, և հրապարակում այսօր 250 միլիոն մարդու միտք ու գործ կունենայինք և ոչ թե մտքի ու գործի այն սուր պակասը, որ այսօր մեզ շնչահեղձ է անում:
Ինձ համար հիմա դժվար է «անազնվություն» ու «շահախնդրություն» բառերից հետո դեռ «դավաճանություն» էլ ասել, բայց այդպես եղավ. սերունդը դավաճանեց գրականության շահին, գրականության շահը ստորադասեց իր ազգային, դասային, ռեգիոնալ շահերին, գրականությունը ծառայեցրեց որպես թե ավելի բարձր նպատակների, օրենսդիր մարմնից կատարածու մարմին դարձրեց գրականությունը և չարաչար պատժվեց - գրականությունը որպես այդպիսին դադարեց գոյելուց: Դա մեղք է, որ չի ներվում անգամ Շեքսպիրին և անգամ իրեն Աստծուն չի ներվում, ապա մի հիշենք, թե մեզ ինչ խորթություն է պատում, Աստված ինչքան է հեռանում մեզնից, երբ Քրիստոսի կերպարի ետևից երբեմն հրեա է նայում: Դա մեղք է ճշմարտության առջև, և մեղքերի մեր բաժինները

ուղիղ համեմատական են սովետական ասված մեր բազմազգ-բազմալեզու գրականության մեջ մեր գրականությունների ներդրումներին:
Անհեթեթ է, չէ՞, մեր ամենամերձավորներին ցանկացանք ամենաանմիջական օգնություն ցույց տալ, բայց անցել է ընդամենը մի երեսուն տարի, և երկրի կյանքն այսօր մեր գլուխների վրայով օգնություն է վերցնում հեռավոր քսանական թվականների և ավելի հեռավոր ժամանակների ու երկրների ու լեզուների գրականություններից: Մեզնից ի՞նչ է մնացած լինելու մի հիսուն կամ հարյուր տարի հետո:
Ասում եք՝ արդեն ժամանակն է, որ գրականությունն իրեն թարմացներ նոր բերաններով, հրապարակում նոր տղաների ու աղջիկների փաղանգներ լինեին: Ասում եք՝ չկան: Աստված չաներ: Եթե նույնիսկ այդպես է, չպետք է հավատալ, փաստը չպիտի ընդունել, պետք է փոքրիշատե օժտված մի հիսուն հոգու վրա մի հինգ տարով ծախս դնել, ազատել նրանց աղքատության ճիրաններից՝ որ մեր երիտասարդությունը քիչ չծվատեց, և ստույգ արդյունքի սպասել: Նորերի բացակայությունը գրականության մահ կնշանակեր - ոչ միայն ժողովրդական կենդանի ձգտումների ու ինքնանորոգման հավերժական ճիգի մահ, այլև վերջ դասական ամբողջ ժառանգության, քանզի դասականի անմահությունը միայն նորերն են ապահովում: Առանց նորերի՝ առանց Լիխաչովի, Տարկովսկու, Սևակի, Վիսոցկու, Շուկշինի... դասականը փառահեղ, բայց միայն պանթեոն էր լինելու: Սարյանն իր շքեղ մեծությամբ երևաց մեկ տասական թվականներին՝ երբ բացահայտեց արևելքն ու արևելքի արվեստը, և մեկ էլ՝ վաթսունական թվականներին՝ երբ ցուցասրահները Մինասինն էին: Մինասը Սարյանին ոչ միայն ծնունդ, այլև վերածնող դարձավ, առանց Մինասի ու Հակոբ Հակոբյանի Սարյանը մեռյալ կուռք էր լինելու: Նույնը Թումանյանի ու սերնդի մասին, որ արթնացրին միջնադարյան ամբողջ հայ պոեզիան՝ էպոսից ու Նարեկացուց մինչև Սայաթ-Նովա:
Այդ նորերը, որ պիտի լինեին ու չկան, երևի թե «վաթսունականների» գործը բավարար են համարում: Եթե այդպես է՝ ավելի լավ է չգան և լավ են անում՝ որ չեն գալիս: Իսկ եթե այնուամենայնիվ գալու են, թող սկսեն այնտեղից, որտեղ մենք վեհերոտ եղանք ու կանգ առանք. թող այդ առնվազն 250 միլիոն կյանքերի հավասար ընկերությունը փնտրեն և ոչ երբեք ենթակայությունը կամ իշխանությունը:

«Լիտերատուրնայա գազետա»-ի հանձնարարությամբ հարցազրույցը 1987 թ. հոկտեմբերին վարել է Իրինա ԹՈՍՈՒՆՅԱՆԸ

«Գրական թերթ», 01.07.1988 թ.